ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմը հայտարարում է մրցույթներ՝ հետևյալ պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

1. «Դվինի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն

2. « Զանգակատան ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն

3. « Գեղանիստի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն

Կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) բարձրագույն բժշկական կրթություն՝ ներքին հիվանդություններ (թերապիա), կամ մանկաբուժություն կամ ընտանեկան բժշկություն մասնագիտությամբ.

2) հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

3) չի լրացել հավակնորդի 65 տարին:

Մրցույթները կանցկացվեն 2023 թվականի նոյեմբերի 8 –ին՝

1. « Դվինի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 10:00-ին

2. « Գեղանիստի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 13:00-ին

1. « Զանգակատան ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 16:00-ին

Մրցույթներին մասնակցելու համար քաղաքացիները Արարատի մարզպետի աշխատակազմ են ներկայացնում՝

1) դիմում.
2) մեկ լուսանկար 3 x 4 չափի.
3) աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.
4) ինքնակենսագրություն.
5) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.
6)բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի հավակնորդի դեպքում՝ նաև պարտադիր զինվորական ծառայության անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական

ծառայությունից ազատված լինելու կամ տարկետման մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթղթի) պատճենը.

7) տեղեկանք՝ դատվածության, դատվածությունը հանված կամ մարված լինելու վերաբերյալ (Արտաքին գործերի նախարարությունից).

8) տեղեկանք՝ սնանկության կամ դրա բաղակայության վերաբերյալ (պետական եկամուտների կոմիտեից).

9) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիվանդությունների բացակայության վերաբերյալ.(արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունից, որտեղ համապատասխան կարգով կցագրված է դիմատուն).

10) հավակնորդի ցանկությամբ՝ հրատարակված գիտական հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

11) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (ըստ դիմումատուի ցանկության).

12)Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգը (ներկայացվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ, ինչի վերաբերյալ կազմվում է հանձնման-ընդունման ակտ), որը ներառում է Կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև Կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, Կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները:

4.Հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է առձեռն կամ առցանց (ararat.andznakazm@mta.gov.am)՝ բացառությամբ Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայցակարգի, որը ներկայացվում է առձեռն:

5. Առձեռն փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, բացի ոչ աշխատանքային օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2023 թվականի հոկտեմբերի 6–ը:

Մրցույթները կկայանան Արարատի մարզպետի աշխատակազմի նիստերի դահլիճում (ք.Արտաշատ , Օգոստոսի 23/60): Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմ (ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60, անձնակազմի կառավարման փաստաթղթաշրջանառության և հասարկայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին, հեռ.0235 2-45-11):

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի
ենթակայության _____ՊՈԱԿ-ի տնօրենի
թափուր պաշտոն զբաղեցնելու համար
անցկացնող մրցույթային հանձնաժողովին

_____
դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

_____
դիմողի հասցեն, հեռախոսը

_____
(անձնագրի սերիան, համարը, երբ և ու՞մ կողմից է տրվել)

Ծնված՝ _____
(օրը, ամիսը, տարին, վայրը)

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով՝ ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի կողմից հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ ինձ թույլատրել մասնակցելու ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայության «_____» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին:

Սույնով հայտնում եմ, որ.

1.Հայերենին _____
տիրապետում եմ, չեմ տիրապետում

2. Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ
_____
ճանչվել եմ, չեմ ճանաչվել

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով _____
տառապում եմ, չեմ տառապում

4.Սեփական նախաձեռնությամբ կամ պարտատիրոջ պահանջով՝ դատարանի վճռով սնանկ
_____
ճանչվել եմ, չեմ ճանաչվել

5.Սահմանված կարգով չհանված կամ չմարված դատվածություն
_____
ունեմ, չունեմ

6.Օրենքի համաձայն ղեկավար պաշտոններ զբաղեցնել _____
արգելվել է, չի արգելվել

Կից ներկայացնում եմ պահանջվող հետևյալ փաստաթղթերը.

1. անձը հաստատող փաստաթղթի պատճենը՝ ..... էջ
2. կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները)՝ ..... էջ
3. աշխատանքային ստաժը հավաստող փաստաթղթի պատճենը՝ ..... էջ
4. զինվորական գրքույկի պատճենը՝ ..... էջ
5. մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի:
6. ինքնակենսագրություն……..……էջ
7. տեղեկանք՝ դատվածության, դատվածությունը հանված կամ մարված լինելու վերաբերյալ……..……էջ
8. տեղեկանք՝ սնանկության կամ դրա բացակայության վերաբերյալ……...էջ
9.տեղեկանք՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիվանդությունների բացակայության

վերաբերյալ……էջ

10----------

11----------

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ _____ «_____» _____ 2023 թ.

ստորագրություն